

AZG Armenian Daily #165, 13/09/2003

Գործողությունների միասնությունը ժամանակի թելադրանքն է

(Ինչպես հասնել Հայոց ցեղասպանության խնդրի լուծման)

Արա Աբրահամյան, Ռուսաստանի Հայերի միության նախագահ

Թուրքիայի հետ հարաբերությունների կանոնավորումը եւ հետագայում բարիդրացիական, իսկ ավելի ուշ նաեւ բարեկամական հարաբերությունների կառուցումը ենթադրում են անցյալի քաղաքակիրթ ջնջում, Թուրքիայի իրագործած Հայոց ցեղասպանության դատապարտում եւ միջազգային իրավունքի հիման վրա այդ հանցագործության հետեւանքների վերացմանն ուղղված համարժեք միջոցների ձեռնարկում: Ուստի Համաշխարհային հայկական կազմակերպության ստեղծման գլխավոր նպատակներից եւ հետեւաբար այդ կազմակերպության խնդիրներից մեկը միջազգային ընկերակցության կողմից Հայոց ցեղասպանության փաստի լիակատար եւ վերջնական հաստատումն է, ներառյալ հենց Թուրքիայի կողմից դրա ճանաչումը, ինչպես նաեւ միջազգային իրավունքի օբյեկտիվ հիմքի վրա խաղաղ միջոցներով դրան առնչվող բոլոր հարցերի կարգավորումը: Սա շատ բարդ խնդիր է, առաջին հերթին՝ արտաքին քաղաքական առումով:

Ինչու թուրքերը չեն ընդունում Ցեղասպանության փաստը

Թուրք ղեկավարները հստակ պատկերացնում են Ցեղասպանության ոճրագործության միջազգային-իրավական հետեւանքները: Գիտեն նաեւ, որ միջազգային ընկերակցությունը ըմբռնել է թուրքական պետության քաղաքական պատասխանատվության բովանդակությունը: Առավել լրիվ տեսքով դա արտահայտվել է Սեւրի խաղաղության բազմակողմ պայմանագրում:

Իրենց իրավունքներից Ցեղասպանության գոհերի կամավոր հրաժարմանը հասնելու նպատակով 1918-20 թթ. Հայաստանին ապօրինի պայմանագրեր պարտադրելու թուրքերի բոլոր փորձերը հաջողություն չունեցան: ՌԽՖՍՀ-ի հետ կնքված Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը չեղյալ հայտարարվեց, իսկ Հայաստանի հետ կնքված Բաթումի եւ Ալեքսանդրապոլի պայմանագրերն ուժի մեջ չմտան: Թուրքիայում ըստ երեւույթին գտնում են, որ Հայկական ԽՍՀ խամաճիկային կոմունիստական կառավարությանը պարտադրված

Կարսի պայմանագիրը եւս չի վերացնում Յեղասպանության հանցագործության համար միջազգային ընկերակցության կողմից պատասխանատվության ճանաչման հետեւանքների հարցը: Հավանաբար այդ պատճառով Անկարան հնարավորություններ է որոնում Հայաստանի ինքնիշխան հանրապետության հետ այն նոր պայմանագրով փոխարինելու կամ վավերացնելու համար:

Անցյալից մնացած բոլոր հարցերի, այդ թվում Հայոց ցեղասպանությանն առնչվող հարցերի կարգավորմանն ուղղված համաձայնությունների արդյունքը, մեր կարծիքով, պետք է դառնա նոր, իրավահավասար պայմանագրի ստորագրումը, որը կարող էր կայուն, իսկապես բարիդրացիական հարաբերությունների հիմք դառնալ:

Կատարած հանցագործության համար պատասխանատվության հարցը Թուրքիային առաջվա պես դրդում է կատաղորեն ընդդիմանալ Հայոց ցեղասպանության բուն փաստի ճանաչմանը: Այսօր մենք ականատեսներն ենք Հայոց ցեղասպանության ժխտման պաշտոնական արշավի հետագա ծավալմանը: Թուրքիայի պետությունն օգտագործում է բոլոր հնարավորությունները, վիթխարի միջոցներ է ծախսում: Չսահմանափակվելով կառավարությունների վրա քաղաքական ճնշում գործածելու եւ զանգվածային լրատվության միջոցները կաշառելու ավանդական միջոցներով, Թուրքիան լայնորեն դիմում է պրոֆեսիոնալ լրբիստական կազմակերպությունների վճարովի ծառայություններին:

Կատարված հանցագործությունը ժխտելու պետական ուղեգծի արտաքին քաղաքական ապահովումն առաջվա պես Թուրքիայի կառավարության առանձնակի հոգածության առարկան է: Թուրքիան խոչընդոտում է իրավունքի եւ արդարացիության հիման վրա Հայկական հարցի լուծմանը, հենվելով որոշ մեծ տերությունների քաղաքական աջակցության վրա: Չնայած աշխարհի իրադրության արմատական փոփոխմանը, ԱՄՆ-ն առաջվա պես նրան համարում է իր գլխավոր ռազմական գործընկերներից մեկը:

Մեկուկես միլիոն հայերի բնաջնջումը ցեղասպանություն որակելուց ԱՄՆ նախագահ Ջորջ Բուշի համառ հրաժարումը բուն Թուրքիայում Հայոց ցեղասպանության քաղաքականության ժառանգորդներն ընկալում են որպես ուղղակի աջակցություն:

Շրջանառության մեջ դրված այն փաստարկը, թե Յեղասպանության համար Թուրքիայի պատասխանատվության հարցում հայերի համառությունն իբր "չի համապատասխանում" Հայաստանի ու Թուրքիայի հարաբերությունների կարգավորման շահերին, ոչ միայն հակասում է արդի միջազգային հարաբերությունների հիմունքների

վերաբերյալ ամենատարրական պատկերացումներին, այլև ուղղակիորեն Թուրքիայի կառավարությանը խրախուսում է ցուցադրելու իր անհաշտողականությունը, ամրապնդում Հայոց ցեղասպանության փաստը չընդունելու նրա վճռականությունը:

Միջազգային իրավունքի հիման վրա հարաբերությունների կարգավորման նպատակով թուրքական կողմի հետ քաղաքական խորհրդակցություններ ու բանակցություններ սկսելու փորձերը դառնում են փաստորեն անհեռանկար: Դա արդարացի է նաև ԱՄՆ-ի նախաձեռնությամբ այսպես կոչված թուրք-հայկական հաշտեցման փորձի դեպքում ("այսպես կոչված", քանի որ "հաշտեցում" բառը կիրառելի չէ այդ ոճրագործության գոհը հանդիսացող հայկական կողմի համար):

Անկարան շարունակում է հրաժարվել Հայոց ցեղասպանությունը ճանաչելուց եւ միջազգային իրավունքի սկզբունքների ու նորմերի հիման վրա դրա հետեւանքները վերացնելուց: Թուրքերը կարծում են, թե տվյալ հարցը չի կարող դառնալ քաղաքական բանակցությունների ու որոշումների առարկա եւ ծայրահեղ դեպքում պատմաբանները կարող են քննարկել որպես վիճելի գիտական հիմնախնդիր:

Ավելին, Թուրքիայի պաշտոնական քաղաքական ներկայացուցիչներն իրենց հայտարարություններում (օրինակ, իմ անչափ զուսպ հոդվածին ի պատասխան, Ռուսաստանում Թուրքիայի դեսպան Քուրթուլուշ Տաշքենտի արած հրապարակումը) թույլատրելի են համարում հանդես գալ "բարդացումների" գրեթե անսքող սպառնալիքներով, եթե հայերը չդադարեն պահանջել Ցեղասպանության դատապարտումը եւ միջազգային իրավունքի հիման վրա դրա հետեւանքների վերացումը:

Մի ամբողջ ժողովրդի բնաջնջման իրենց քաղաքականությունը ներկայումս աշխարհում վարվող հակաճայրահեղական եւ հակաահաբեկչական քաղաքականությանն ինչ-որ ձևով հարմարեցնելու նպատակով եւ գիտակցելով, որ աշխարհի քաղաքակիրթ ժողովուրդներից մեկի բնաջնջումը թաքցնելը հետզհետե ավելի է դժվարանում, Թուրքիայի կառավարությունը գործի է դնում Հայոց ցեղասպանությունը ժխտելու նոր հնարքներ ու միջոցներ: Եթե մինչև վերջերս նախապատվությունը տրվում էր ապատեղեկատվությանը, փաստերի ժխտման կամ խեղաթյուրման միջոցով միջազգային հանրությանը խաբելուն, ապա այժմ թուրքերն սկսել են այդ պարզունակ ավանդական մեթոդները զուգորդել առավել նրբահնար պաշտոնական-իրավական փաստարկների հետ:

Միջազգային իրավունքի նկատմամբ իրենց իրական վերաբերմունքը թաքցնելով, թուրքերն սկսել են իրենց ներկայացնել իբրև միջազգային

իրավունքի կողմնակիցներ, իսկ հայերին վերագրվում է իրավունքը պատմությանը նենգափոխելու, միջազգային իրավունքի հիման վրա Թուրքիայի հետ հարաբերությունները կարգավորելուց հրաժարվելու ձգտում:

Ցեղասպանության ժխտման արշավի սաստկացման վերաբերյալ պատկերացումը թերի կլինի, եթե չնշենք նոր երեւոյթը, որը բուն Թուրքիայում խիստ միջոցների ձեռնարկման անհրաժեշտություն է առաջացրել: Այդ երկրի պատմության մեջ առաջին անգամ ի հայտ են եկել պատասխանատու գիտնականներ եւ հասարակական գործիչներ, որոնք ուզում են կատարված հանցագործության ընդունմամբ, անկեղծ զղջմամբ Գերմանիայի օրինակով երկրի վրայից մաքրել խայտառակության բիծը: Թեւ նրանք հատուկենտ են, բայց Թուրքիայի կառավարող շրջանակները նրանց գոյությունը լուրջ սպառնալիք են համարում Հայոց ցեղասպանության կտրուկ ժխտման իրենց ավանդական քաղաքական գծի համար:

Հայերի հանդեպ Թուրքիայի պետության վերաբերմունքի կառավարական վարկածի հավաստիության հարցում կասկածների հաճախակի արտահայտման կապակցությամբ միջոցներ են ձեռնարկվում նաեւ թուրքերի ուղեղները լվանալու նպատակով: Երկրի դպրոցներում կրթության նախարար Հուսեյն Չելիքի կարգադրությամբ մտցվում է ուսումնական նոր առարկա՝ Հայոց ցեղասպանության ժխտման դասընթաց: Թուրքիայում պատժելի է ոչ միայն Հայոց ցեղասպանության ճանաչումը, այլեւ Ցեղասպանության ժխտման հավաստիության հարցում կասկածների նույնիսկ սուկ արտահայտումը:

Նոր շրջադարձ ցեղասպան պետության պաշտպանության մարտավարության մեջ

Վերջերս ավելի ու ավելի ակնհայտորեն է երեւում Հայոց ցեղասպանությունն առանց Թուրքիայի պատասխանատվության միջազգային-իրավական հետեւանքների եւ հայ ժողովրդի ոտնահարված իրավունքները հնարավորինս առավելագույն չափով վերականգնելու անհրաժեշտությունը ճանաչելու արեւմտյան տերությունների միտումը:

Դա առավել հստակ ձեւով դրսեւորվեց "Արեւելյան Անատոլիայում կատարված իրադարձությունների" (մեղմասացություն Օսմանյան կայսրության հայկական վիլայեթներում Հայոց ցեղասպանությունը նշելու համար) նկատմամբ Ցեղասպանության ոճիրը կանխելու եւ դրա համար պատժելու կոնվենցիայի կիրառելիության վերաբերյալ "Թուրք-հայկական հաշտեցման հանձնաժողովի" թուրք եւ հայ

անդամների հարցին ի պատասխան Նյու Յորքի անցումային ժամանակաշրջանի արդարության կենտրոն հրավիրված իրավախորհրդատուների եզրակացության մեջ:

Պատասխանելով, որ այդ իրադարձությունները կարող են ցեղասպանություն համարվել կոնվենցիայում այդ տերմինի կիրառման իմաստով, անանուն իրավախորհրդատուները ճանաչման նշանակությունը հանգեցրին Հայոց ցեղասպանությունը որպես "պատմական փաստ" վկայակոչելու հնարավորությանը, որը չի ենթադրում իրավական հետեւանքներ: Նրանք կոնվենցիայի հիման վրա բացառեցին Ցեղասպանության համար Թուրքիայի եւ թուրքերի պատասխանատվության հնարավորությունը պատճառաբանելով, թե փաստաթուղթը հետադարձ ուժ չունի իր կիրարկումից՝ 1951 թ. հունվարի 12-ից առաջ տեղի ունեցած իրադարձությունների նկատմամբ:

Նման հարցադրումն ինձ ստիպում է շարունակել փաստարկների մշակումը, որոնք հաստատում են Ցեղասպանության ոճրի կատարման փաստը ոչ միայն պատմականորեն, այլեւ իրավաբանորեն հավաստելու հնարավորությունը՝ բոլոր միջազգային-իրավական հետեւանքներով:

Միանգամայն ակնհայտ է դառնում այն անվիճելի, վավերականորեն հաստատված փաստի անտեսման սխալականությունը, որ միջազգային ընկերակցությունը՝ ի դեմս Փարիզի հաշտության խորհրդաժողովի եւ Ազգերի լիգայի ճանաչել է Հայոց ցեղասպանության փաստը եւ Թուրքիայի որպես պետության քաղաքական պատասխանատվությունը սահմանել արդեն այն ժամանակ, երբ գործվում էր այդ ոճիրը:

Պետք է պարզել, թե մենք ինչի ենք ձգտում

Հայոց ցեղասպանության ճանաչման պայքարի քաղաքական բարդ պայմաններում դրական լուծման կարելի է հասնել լոկ այն դեպքում, եթե մենք միավորենք մեր ջանքերը եւ գործենք միասնական համազգային հայեցակարգի հիման վրա:

Նախ հարկավոր է պարզել, թե մենք ինչի ենք ձգտում: Պատասխանը, կարծես թե ինքնին հասկանալի է. Հայոց ցեղասպանության ճանաչումը պետությունների միջազգային ընկերակցության եւ հենց Թուրքիայի կողմից: Սակայն, ինչպես արդեն նշեցինք, միջազգային ընկերակցությունը եւ հենց Թուրքիայի պետությունը Օսմանյան կայսրությունը ճանաչել են Հայոց ցեղասպանությունը, իսկ թուրքերի եւ Թուրքիայի պատասխանատվությունը հաստատվել է հենց ոճրագործության պահին:

Նշանակում է, խոսքը փաստն արդեն ընդունած պետությունների երկրորդ ճանաչման եւ նոր պետությունների կողմից առաջին ճանաչման մասին է, թեւ վերջիններս ընդգրկված էին նախկին մետրոպոլիսների ճանաչման ակտի մեջ: Եթե ելնենք նրանից, որ ի դեմս համայն մարդկությունը ներկայացնող Փարիզի հաշտության խորհրդաժողովի եւ Ազգերի լիգայի միջազգային ընկերակցությունը ոչ միայն ընդունել է "մի ամբողջ ժողովրդի սպանության" փաստը, այլեւ միջազգային պատասխանատվություն է սահմանել Թուրքիայի պետության այդ ոճրի համար, ապա առավել ստույգ եւ ճիշտ կլիներ խոսել արդեն սահմանված պատասխանատվությունն իրականացնելու անհրաժեշտության մասին:

Այս հավաստումն ունի գործնական մեծ կարեւորություն: Դա զգալիորեն դյուրացնում է առաջադրված նպատակի ապահովումը: Եթե աշխարհին հիշեցնենք, որ մեծ տերությունների՝ ԱՄՆ-ի, Մեծ Բրիտանիայի եւ մյուսների կառավարությունները պաշտոնապես ընդունել են Թուրքիայի մեղքը Ցեղասպանության հանցագործության մեջ, որն այն ժամանակ կոչվել է "մի ամբողջ ժողովրդի սպանություն", որ միջազգային իրավասու մարմինները՝ ի դեմս Փարիզի հաշտության խորհրդաժողովի եւ ՄԱԿ-ին նախորդած Ազգերի լիգայի, Հայոց ցեղասպանության համար սահմանել են Թուրքիայի եւ թուրքերի պատասխանատվությունն այն նույն միջազգային-իրավական հիմքի վրա, ըստ որի քառորդ դար անց սահմանվեց Գերմանիայի եւ նացիստ պարագլուխների պատասխանատվությունը, ապա դա էապես կնվազեցնի նրանց մանեւրելու հնարավորությունները:

Ի՞նչ ենք հասկանում ճանաչում ասելով: Արդյոք միայն բարոյական բավարարություն, իրավունքի եւ արդարության գաղափարի վերացական հաղթանակ: Մեզ կբավարարի՞ միջազգային ընկերակցության կողմից Հայոց ցեղասպանության իր իսկ ճանաչած փաստի հաստատումը, թե՞ պարտավոր ենք վերջին հաշվով հասնել հենց Թուրքիայի կողմից իր ոճրագործության ընդունմանը: Հայերի եւ ամբողջ հայ ժողովրդի ու իրավունքների վերականգնմանը պետք է հասնենք:

Այլ կերպ ասած, մենք ինքներս պետք է ունենանք անցյալից մնացած բոլոր հարցերի կարգավորման միասնական իրատեսական ծրագիր, անշուշտ, հաշվի առնելով Թուրքիայի եւ թուրք ժողովրդի հետ հարաբերությունների զարգացման հեռանկարները:

Հնարավոր է փոխզիջում ճանաչման հարցում

Ցեղասպանության հանցագործության ճանաչման ու դատապարտման հարցում չի կարող լինել փոխզիջում: Ժողովրդի

կյանքի ու մահվան հարցը չի կարող լինել դիվանագիտական խաղերի առարկա: Հենց Թուրքիայի կողմից այդ ծանր ոճրի անկեղծ խոստովանության ու դատապարտման դեպքում միայն հնարավոր կլինի որոնել կոնկրետ հարցերի լուծումներ:

Միջազգային իրավունքը ելնում է այն սկզբունքից, որ իրավախախտումը եւ առավել եւս հակամարդկային ոճրագործությունը չեն կարող որեւէ իրավունք ծնել այդ ոճիրը գործած պետության համար: Ակնհայտ է նաեւ, որ հայերը, դեկավարվելով բարիդրացիական հարաբերությունների ամուր հիմք ստեղծելու ցանկությամբ, պետք է հանդես բերեն որոշակի իրատեսություն:

Փոխզիջումը հնարավոր է միայն Թուրքիայի կողմից Հայոց ցեղասպանության փաստի ճանաչումից հետո հայ-թուրքական հարաբերությունների ամբողջությանն առնչվող քաղաքական իրավական որոշումների փաթեթի հիման վրա այդ հանցագործության հետեւանքների վերացման կոնկրետ միջոցների մշակման եւ ընդունման ժամանակ:

Հայկական հարցի լուծման միասնական հայեցակարգի մասին

Գործողությունների այդպիսի համահայկական ծրագրի մշակումը շատ բարդ խնդիր է: Այն արժարծում է ինչպես ներքաղաքական կյանքի, այնպես էլ այլ հարաբերությունների հարցերի մի ամբողջ համալիր՝ միջազգային, իրավական, քաղաքական, տնտեսական, ֆինանսական եւ այլն:

Կարգավորման պայմաններին առնչվող որոշումները պետք է լինեն համակողմանի քննարկման արդյունք, ըստ որում, քննարկման եւ որոշումների ընդունման արարողակարգը պետք է ապահովի ամբողջ հայ ժողովրդի եւ մանավանդ Ցեղասպանությունից անմիջականորեն տուժած անձանց ժառանգների կամքի ազատ արտահայտումը:

Նման համազգային դիրքորոշման մշակումը չի կարող լինել մարդկանց ինչ-որ խմբի կամ քաղաքական ինչ-որ կուսակցության մենաշնորհը: Ավելին, այդ խնդրի լուծման մեջ Հայաստանի պետության դերի ողջ կարելորությամբ հանդերձ, համահայկական դիրքորոշման մշակումը չի կարող լինել նաեւ հանրապետության կառավարության մենաշնորհը:

Ակնհայտ է, որ միասնական ծրագրի մշակմանը պետք է մասնակցեն ինչպես ՀՀ պետական իշխանության իրավասու մարմինները, գիտական հիմնարկներն ու հասարակական կազմակերպությունները, այնպես էլ Սփյուռքի հասարակական

կազմակերպություններն ու հաստատությունները, քանզի Սփյուռքի հիմքը կազմել են արեւմտահայ գաղթականները: Այդ աշխատանքում պետք է ներգրավվեն նաեւ արեւմտահայերի գործող հայրենակցական միությունները, որոնք միավորում են Յեղասպանությունից ամենից շատ տուժած արեւմտահայերի սերունդներին ու ժառանգներին: Հատկապէս կարելոր է ապահովել քաղաքական ամբողջ սպեկտրի եւ առաջին հերթին քաղաքական կուսակցությունների ներկայացուցչությունը:

Նման համազգային ծրագրի ստեղծումը ենթադրում է պատմության, աշխարհագրության, վիճակագրության եւ այլ ոլորտների մի ամբողջ շարք հարցերի առթիվ հիմնավորված դիրքորոշումների մշակման անհրաժեշտություն: Այդ հարցերից են, օրինակ, Յեղասպանության իրականացման ժամանակը եւ պարբերացումը, Յեղասպանության տարածական ընդգրկումը թուրքական պետության պետական սահմաններում եւ դրանցից դուրս, բնակչության թվակազմի եւ Յեղասպանության զոհերի դինամիկան (սպանվածներ, տեղահանվածներ, զոհվածներ, թրքացվածներ, իսլամացվածներ): Հարկավոր է հիշել, որ հակառակ կողմն անմիջապէս օգտագործում է նվազագույն տարբերությունները կամ անճշտությունները:

Այդպիսի փորձված հակառակորդի հետ եւ նման կարելոր հարցերի շուրջը չի կարելի հանպատրաստից բանակցություններ վարել: Հարցի յուրաքանչյուր կողմ, յուրաքանչյուր մանրամասնություն պետք է լինի կշռադատված, մանրակրկիտ մշակված, փաստարկված: Բանակցությունները պետք է հիմնվեն կարգավորման միասնական հայեցակարգի վրա: Թուրքական կողմի հետ բանակցություններ կարելի է սկսել միայն համահայկական դիրքորոշման մշակումից եւ հնարավոր զիջումների սահմանների պարզումից հետո:

Ամենայն հավանականությամբ բանակցությունները կվարվեն ըստ փաթեթի քաղաքական իրավական սկզբունքի, որն, ինչպէս ցույց է տալիս համաշխարհային փորձը, դյուրացնում է որոշումների ընդունումը մի շարք փոխկապակցված լուծումների վերաբերյալ, երբ որոշ հարցերին առնչվող զիջումները փոխհատուցվում են այլ հարցերին առնչվող օգուտով:

Ակնհայտ է, որ նախապէս պետք է մշակվի քաղաքական իրավական փաթեթի, այսինքն՝ հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման համազգային ծրագրի բաղկացուցիչ մասի որոշումների ամբողջության մեր տարբերակը: Այն պետք է համապատասխանի իրավունքի եւ արդարացիության պահանջներին եւ միեւնոյն ժամանակ հնարավորին չափ հաշվի առնի ստեղծված իրողությունները:

Մեր կարծիքով, այդ փաթեթն անպայման պետք է ներառի Թուրքիայի հրաժարումը Լեռնային Ղարաբաղի հարցում Ադրբեջանի ծայրահեղական դիրքորոշման միակողմանի պաշտպանությունից: Դա հիմնավորվում է նրանով, որ թուրքական զորքերն ադրբեջանական հրոսակախմբերի հետ անմիջականորեն մասնակցել են Լեռնային Ղարաբաղի հայ բնակչության Ցեղասպանությանը (մասնավորապես 1920 թ. գարնանը Շուշիի 20 հազար հայերի կոտորածին):

Եթե մեզանից պահանջում են հաշվի առնել Ցեղասպանության ոճրագործության հետեւանքով ստեղծված էթնիկական իրողությունները, ապա մենք առավել եւս իրավունք ունենք պահանջել, որ հարգվեն Ղարաբաղում հազարամյակներով գոյություն ունեցած իրողությունները:

Հասնելով Ցեղասպանության հետեւանքների վերացմանը եւ Թուրքիայի հետ նոր հարաբերությունների հաստատմանը, չի կարելի անտեսել Հայաստանի պետության արտաքին անվտանգությունն ապահովելու, ցեղասպանության քաղաքականության կրկնությունը կանխելու անհրաժեշտությունը:

Ո՞վ էլ ինչպե՞ս պետք է բանակցի

Ամենակտրական ձեռով մերժելով Հայոց ցեղասպանության փաստի ճանաչումը եւ հարաբերությունների կարգավորման պաշտոնական բանակցություններում Հայաստանի ներկայացուցիչների անաջադրելով բացարձակապես անընդունելի նախապայմաններ, Թուրքիայի կառավարությունը դրա հետ մեկտեղ հանդես է գալիս Հայաստանի կառավարությանը շրջանցելով Սփյուռքի ներկայացուցիչների հետ "բանակցելու" նախաձեռնությամբ: Վերջերս տարբեր երկրների հայ համայնքների ներկայացուցիչների հետ շփումներ սկսելու մտադրություն հայտնեց Թուրքիայի արտգործնախարարության հետախուզական ծառայությունը:

Մենք դեմ չենք իսկական "ժողովրդական դիվանագիտությանը", երբ երկու կողմերից իրոք հանդես են գալիս հանրության ներկայացուցիչները, որպեսզի փոխըմբռնում հաստատեն: Երկու կողմերի իրոք "ժողովրդական դիվանագիտությունը" կարող է նպաստել երկու ժողովուրդների ու պետությունների հարաբերությունների կարգավորմանը: Դրա արժեքն ու նշանակալիությունն աճում են, երբ խոսքը հայ-թուրքական բարդ հարաբերությունների մասին է: Մենք դեմ ենք "բանակցությունների" նմանակմանը, երբ պետական մարմինը բացահայտորեն կամ քողարկված ձեռով փորձում է հայերի ինչ-ինչ խմբերի հետ

պայմանավորվել հենց թուրքերի կամ նրանց բարեկամների ընտրությամբ:

Հասարակայնության ներկայացուցիչների բանակցությունները հնարավոր եւ նույնիսկ անհրաժեշտ է, բայց որպէս հարաբերությունների իսկական կարգավորման գործընթացի մաս եւ ոչ թե այն պետության օգտին քաղաքական շահարկումներ անելու համար, որը չի ուզում զոջալ մարդկության դեմ իր գործած ծանրագույն ոճրի համար:

Այն "բանակցությունները", երբ մի կողմից հանդես են գալիս Ցեղասպանության քննարկման հնարավորությունը կտրականապէս մերժող պետության մարմինները, իսկ մյուս կողմից՝ Սփյուռքի անկազմակերպ համայնքների ներկայացուցիչները, որեւէ ընդհանուր բան չունեն "ժողովրդական դիվանագիտության" հետ:

Ակնհայտ է, որ այդ խուսավարումը նախատեսված է հայերի դիրքերը թուլացնելու, պառակտում սերմանելու համար: Իսկ գլխավորն այն է, որ իբր թուրքերի եւ հայերի, Թուրքիայի եւ Հայաստանի հարաբերությունների կարգավորման նպատակով վարվող բանակցությունների տեսանելիություն ստեղծելով, իրականում ձգտում են խափանել Հայոց ցեղասպանության ճանաչման գործընթացը:

Ցեղասպանության թեման կապված է յուրաքանչյուր հայի հետ, ուստի բնական է, որ ամեն հայ ուզում է արտահայտվել, տալ իր գնահատականները, առաջարկություններ անել: Սակայն ամեն հայ չէ, որ ունի նյութեր վիճակագրական տվյալներ, փաստագրական ծավալուն զանգված, այդ բարդ ժամանակաշրջանի միջազգային հարաբերությունների պատմության, միջազգային իրավունքի անհրաժեշտ գիտելիքներ:

Հանպատրաստից եւ դիլետանտային դատողությունների ժամանակն անցել է: Չպետք է լինի որեւէ պարտիզանություն: Ոչ ոք չպետք է իրեն իրավունք վերագրի հայ ժողովրդի անունից հանդես գալու համազգային նշանակության բախտորոշ հարցերի առթիվ: Հայ ժողովրդին պարտավորեցնող նման բանակցությունները չպետք է վարեն ինքնակոչ ներկայացուցիչները: Հայ ժողովրդի անունից նման բարդ հարցի առթիվ պաշտոնական եւ ոչ պաշտոնական բանակցություններ կարող են վարել միայն լիազորված իրավասու ներկայացուցիչները:

Միջպետական պաշտոնական բանակցություններ կարող են վարել միայն պաշտոնական ներկայացուցիչները: Ի տարբերություն հասարակայնության ներկայացուցիչների բանակցությունների,

պետությունների ոչ պաշտոնական բանակցությունները վարում են հենց պետությունների ներկայացուցիչները՝ դրանց ղեկավարությամբ ու վերահսկողությամբ:

Նմանօրինակ ոչ պաշտոնական բանակցությունները կարելուք դեր են խաղում սուր եւ բարդ հարցերը լուծելիս, պետություններին օգնելով գտնել փոխընդունելի լուծումներ:

Այս կապակցությամբ հարց է ծագում. այդ կատեգորիաներից որի՞ն պետք է դասվի "Թուրք-հայկական հաշտեցման հանձնաժողովը": Թեեւ դրա կազմում կան նախկին արտգործնախարարներ, երկու պետություններից ոչ մեկը ցանկություն չի հայտնել, որ նրանք թեկուզ ոչ պաշտոնական ձեւով ներկայացնեն իրենց: Համենայն դեպս, մեզ թվում է, որ Հայաստանի կառավարությունը կապ չի ունեցել հանձնաժողովի հայ անդամների նշանակման հետ:

Հարց է ծագում. ԹՀՀՀ-ն կարո՞ղ է արդյոք օգտագործվել որպես շահագրգիռ կողմերի ոչ պաշտոնական բանակցությունների ուղիներից մեկը:

Նման որոշման ընդունումը Հայաստանի եւ Թուրքիայի կառավարությունների առանձնաշնորհն է: Նրանք կարող են նման որոշում ընդունել հանձնաժողովի աշխատանքի գնահատման հիման վրա: Այդ դեպքում հարկ կլինի դրա կազմին համապատասխան փոփոխություն. այն պետք է սահմանի ոչ թե երրորդ կողմը (ինչպիսին էլ լինեն դրա շարժառիթները), այլ համապատասխանաբար հայկական եւ թուրքական կողմերը:

Բանակցությունների հայկական կողմի կազմը պետք է ապահովվի ոչ միայն քաղաքական սպեկտրի հիմնական մասի, այլեւ Ցեղասպանության անմիջական զոհերի արեւմտահայերի ներկայացուցչությունը: Ինքնըստինքյան հասկանալի է նաեւ այն, որ պետք է ապահովվի միջազգային հարաբերությունների, դիվանագիտության եւ իրավունքի հարցերում իրավասության պատշաճ մակարդակը:

Պետության դերի մեծացումը

Մեր սրբազան իրավունքների պաշտպանության հնարավորությունը մեզանից խլելու նպատակով Թուրքիան Խորհրդային Ռուսաստանի բոլշեիկյան կառավարության հետ մեկտեղ մեզ զրկեց ազգային պետականությունից: Հայկական ԽՍՀ խամաճիկային կոմունիստական կառավարությունը պաշտոնական հարցադրման որեւէ հնարավորություն չունեւ: ԽՍՀՄ-ում Հայոց ցեղասպանության թեման արգելված էր:

Անկախությունն ձեռք բերելուց եւ ՄԱԿ-ի անդամ դառնալուց հետո Հայաստանը, որպէս միջազգային իրավունքի սուբյեկտ, բոլոր հնարավորություններն ունի իրավասու միջազգային կազմակերպություններում ու հաստատություններում տվյալ հարցն առաջադրելու համար:

Մակայն իրականում պաշտոնական-իրավական այդ հնարավորությունները խիստ սահմանափակված են քաղաքական գործոնի պատճառով: Թեեւ Հայաստանի ներկայիս ղեկավարությունը, հաշվի առնելով հայ ժողովրդի կամքը, Հայոց ցեղասպանության ճանաչման հարցը պաշտոնապէս առաջ է քաշում որպէս Հայաստանի արտաքին քաղաքականության խնդիրներից մեկը, նա, ըստ երեւույթին, կասկածներ ունի մեր պահանջների միջազգային-իրավական հիմնավորումների առնչությամբ: Եթէ այս ենթադրությունը ճիշտ է, ապա հարկավոր է ուղղակի ասել, որ նման կասկածներն անհիմն են: Մեր հնարավորությունների նմանօրինակ գնահատումը կարող է վկայել, որ Հայաստանի արտաքին քաղաքականության միջազգային-իրավական ապահովումը, մեղմ ասած, պատշաճ մակարդակի վրա չէ: Կուզենայինք մտածել, թե մենք սխալվում ենք:

Այդ դեպքում ինչո՞վ բացատրենք Ցեղասպանության հարցի առաջադրման նկատմամբ անչափ զուսպ վերաբերմունքի փաստը: Պետությունն ինչո՞ւ է հրատարակում "սպիտակ" գրքեր, պաշտոնապէս հրապարակում փաստաթղթեր, որոնք հաստատում են, որ "մի ամբողջ ժողովրդի կանխամտածված սպանությունը" ամբողջ աշխարհը դատապարտել է արդեն ոճրագործության պահին, որ թուրքերի, որպէս ֆիզիկական անձանց, քրեական պատասխանատվությունը եւ Թուրքիայի, որպէս պետության, քաղաքական պատասխանատվությունը սահմանել է ամբողջ միջազգային ընկերակցությունն ի դեմ Փարիզի հաշտության խորհրդաժողովի եւ հաստատել Ազգերի լիգան: Ինչո՞ւ բուն Հայաստանում հրատարակվող վավերագրերին պաշտոնական հրատարակությունների կարգավիճակ չի տրվում: Ինչո՞ւ Ցեղասպանության թանգարանը ոչ թե պետական, այլ ակադեմիական հաստատություն է: Ինչո՞ւ ոճրագործության՝ Հայոց ցեղասպանության միջազգային-իրավական խոր մշակումն իրականացվում է ոչ թե Հայաստանում, այլ միայն Սփյուռքի երկրներում: Եթէ ներկայիս վարչակարգը հրաժարվել է բացարձակապէս սխալ եւ արատավոր այն դրույթից, թե Հայոց ցեղասպանությունը միայն բարոյականության եւ պատմության հարց է, եւ եթէ նա գտնում է, որ դա նախ եւ առաջ միջազգային իրավունքի հարց է, Թուրքիայի պատասխանատվության եւ այդ ոճրագործության հետեւանքների վերացման հարց, ապա ինչո՞ւ

այդ հարցերը չեն մշակվում եւ պաշտոնապէս չեն առաջադրվում:

Եթէ Յեղասպանության համար Թուրքիայի պատասխանատվության հարցի առաջադրումից ձեռնպահ մնալը գիտակցված վարքագծի արդյունք է, ապա մենք իրավասու ենք հայտարարելու, որ դա, մեղմ ասած, սխալ քաղաքականություն է, որը հակասում է ինչպէս բուն Հայաստանի, այնպէս էլ Մփյուռքի հայերի կամքին: Պետությունը չպետք է հեռու մնա արմատական հարցադրումից, որը վերաբերում է կատարված ոճրի՝ Յեղասպանության համար Թուրքիայի եւ թուրքերի միջազգային-իրավական պատասխանատվությանը:

Երբ լռում էր Հայկական ԽՍՀ կառավարությունը, դա բացատրելի էր, քանի որ ոչ ոք չէր կարող նման վարքագիծը պատկերացնել որպէս միջազգային իրավունքի սուբյեկտի վարքագիծ: Դա համարվում էր իրավիճակին Հայաստանի համակերպում:

Անկախություն ձեռք բերելուց եւ ՄԱԿ-ի անդամ դառնալուց հետո Հայաստանի վիճակը փոխվել է: Չի կարելի մոռանալ, որ միջազգային իրավունքում ինքնիշխան պետության լռությունը գնահատվում է իբրեւ համաձայնություն կամ, լավագույն դեպքում, համակերպում գոյություն ունեցող իրավիճակին: Կարելի է բերել օրինակներ, երբ Միջազգային դատարանում պետությունը բացահայտ արդարացի գործը տանուլ է տվել միայն այն պատճառով, որ ժամանակին չի առաջադրել ոտնահարված իրավունքների վերականգնման հարցը: Նման վարքագիծը գնահատվել է որպէս լուր համաձայնություն, որը ոչ իրավական իրավիճակը վերածել է իրավականի:

Այժմ, երբ Հայաստանը խաղաղ միջոցներով, միջազգային իրավունքի օրբեկտիվ հիմքի վրա Յեղասպանության հետեւանքների վերացմանը հասնելու հնարավորություն է ստացել, բնականորեն հարց է ծագում. Հայաստանի Հանրապետության կառավարությունն ինչպէս կօգտվի այդ իրավունքից: Չէ՞ որ անկախության նվաճման իմաստը հենց այն էր, որ հնարավորություն ստանանք, որպէս միջազգային իրավունքի սուբյեկտ, պաշտպանել Հայաստանի եւ ամբողջ հայ ժողովրդի օրինական իրավունքներն ու կենսական շահերը:

Մենք չենք ուզում պարզեցնել հարցը: Մենք հասկանում ենք, որ միջազգային արդի պայմաններում միշտ չէ, որ արդար գործն ինքնաբերաբար հաջողություն է ունենում: Ինչպէս 19-րդ դարի վերջերին եւ ամբողջ 20-րդ դարում, աշխարհաքաղաքական իրադրությունն այսօր եւս չի նպաստում իրավունքի եւ արդարության հաղթանակին: Արդար գործը հարկավոր է համառորեն եւ հմտորեն պաշտպանել եւ ոչ թէ լռության մատնել:

Հավանություն տալով Յեղասպանության հարցում եղած հակազգային

պարտվողական դիրքորոշումից նախագահ Ռ. Քոչարյանի վարչակազմի հրաժարմանը, մենք նրան կոչ ենք անում հետևողականորեն եւ սկզբունքայնորեն պաշտպանել այդ ոճրագործության գոհը դարձած ամբողջ հայ ժողովրդի օրինական իրավունքներն ու շահերը:

Աշխարհաքաղաքական անչափ բարդ պայմաններում պաշտպանելով Հայաստանի Հանրապետության բարձրագույն պետական շահերը, երկրի ղեկավարությունը պետք է դրա հետ մեկտեղ հետևողականորեն հասնի Ցեղասպանության հետեւանքները հնարավոր առավելագույն չափով վերացնելու համահայկական խնդրի արդարացի լուծմանը: Դա նաեւ գործնական քաղաքականության հրամայական պահանջն է:

Հայաստանի "բարեկամների" ստահող ու կեղծավոր հորդորներին հակառակ, Թուրքիայի կողմից Հայոց ցեղասպանության փաստի ճանաչման պահանջը, նրա կողմից այդ ոճրագործության դատապարտումը չեն կարող համարվել Հայաստանի եւ հայ ժողովրդի հետ նրա հարաբերությունները բարդացնող գործոն:

Մենք արդեն նշել ենք, որ Թուրքիայի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման խնդիրը բնավ էլ բարոյականության եւ պատմության հարց չէ: Խնդիրն անհամեմատ մեծ է. խոսքը մի ամբողջ ժողովրդի անվտանգության, բուն հայկական պետության գոյության մասին է:

Երբ հարեւան ուժեղ պետությունը չի ընդունում իր մեղքը պատմական հայրենիքում մեկուկես միլիոն անմեղ մարդկանց ոչնչացման համար, երբ նա, իրեն վերագրելով ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի գործառույթներ, շրջափակում է ՄԱԿ-ի անդամ ինքնիշխան պետությանը, երբ այդ պետության բարձրագույն պաշտոնատար անձինք Հայաստանին սպառնում են "եւս մեկ դաս տալ", երբ այդ պետության հասարակական գիտակցության մեջ սերմանում են հայերի հանդեպ անհանդուրժողություն եւ նույնիսկ ատելություն, նման պայմաններում Հայոց ցեղասպանության համառ ժխտումը Հայաստանի համար ստանում է ռազմավարական խնդրի ծավալներ, որը հղի է ողբերգական անցյալի կրկնության հնարավորությամբ:

Մենք՝ իրատեսներս, ջանում ենք սթափորեն գնահատել իրավիճակը, երբ խոսքը մեր ժողովրդի ապագայի մասին է: Ուստի մենք գտնում ենք, որ երկրի անվտանգության հարցը հարկավոր է դնել համաշխարհային քաղաքականության օրակարգում եւ համաշխարհային ընկերակցության ուշադրությունը բեւեռել այն սպառնալիքի վրա, որն իր մեջ թաքցնում է Հայոց ցեղասպանությունը դատապարտելուց Թուրքիայի հրաժարումը:

Հարաբերությունները "բարդացնելու" քողարկված սպառնալիքները լոկ հաստատում են տարածքային ընդարձակման ու Ցեղասպանության նախկին քաղաքականության կրկնության երկյուղների հիմնավորվածությունը, ամրապնդում մեր վճռականությունը՝ հասնելու Հայոց ցեղասպանության դատապարտման, որպես դրա կրկնությունը կանխելու երաշխիք:

Դիվանագիտական աջակցության ապահովումը

Հայոց ցեղասպանության ժխտումը, ինչպես էլ այդ ոճրագործության իրականացումը, հնարավոր է միայն աջակցության պայմաններում, որ Թուրքիային ցույց են տալիս որոշ մեծ տերություններ:

Տարբեր ժամանակներում թուրքերի ցեղասպանական քաղաքականությանը քաղաքական ու դիվանագիտական աջակցություն են ցույց տվել Մեծ Բրիտանիան, կայզերական Գերմանիան, ԱՄՆ-ը եւ ՆԱՏՕ-ի որոշ երկրներ: Թուրքիան այսօր էս լայնորեն օգտագործում է քաղաքական-դիվանագիտական միջոցները:

Արդի միջազգային հարաբերությունների քաղաքական պայմաններում հայ ժողովրդի շահերի հաջող պաշտպանության հնարավորությունը կապված է միջազգային քաղաքականության հարցերում ճիշտ կողմնորոշվելու հմտության հետ:

Դա նախ էլ առաջ Հայաստանի Հանրապետության քաղաքական ղեկավարության էլ արտաքին քաղաքական գերատեսչության խնդիրն է: Որպես ՄԱԿ-ի եւ միջազգային այլ կազմակերպությունների ու հաստատությունների անդամ, Հայաստանի Հանրապետությունը կարող է էլ պարտավոր է պաշտպանել հայ ժողովրդի իրավունքներն ու շահերը:

Դիվանագիտական ասպարեզում թուրքերի հարձակմանը դիմակայելու սահմանափակ հնարավորություններ ունեն նաեւ հայկական համայնքները, հատկապես այնպիսի երկրներում, ինչպիսիք են ԱՄՆ-ը, Ռուսաստանը, Ֆրանսիան, Հունաստանը եւ այլն: Իրենց երկրների արտաքին քաղաքական գործունեության վրա ներազդելով, դրանք կարող են հասնել կառավարությունների արդարացի քաղաքական գծի վարմանը:

Միջազգային-իրավական ապահովումը

Արդի պայմաններում, երբ Թուրքիան սկսել է շեշտը դնել աղավաղված պաշտոնական-իրավական փաստարկների,

ցեղասպանությունը կանխելու եւ դրա համար պատժելու միջազգագրի եւ միջազգային իրավունքի նորմերի չարամիտ խեղաթյուրումների վրա, առաջին պլան է քաշվում հանուն իրավունքի եւ արդարության հաղթանակի հայ ժողովրդի պայքարի միջազգային-իրավական ապահովումը:

Ցավոք, թերագնահատվում է միջազգային իրավունքի նշանակությունը հայ ժողովրդի շահերի պաշտպանության գործում: Մեզ հայտնի չեն Ցեղասպանության զոհերի իրավունքների պաշտպանության գործում փորձագետների ներգրավման դեպքեր այն ժամանակվանից, երբ հայ գաղթականների կենտրոնական հանձնախումբն իրավաբանական խորհրդատվության նպատակով դիմեց միջազգային չորս նշանավոր իրավաբանների Ժիլբեռ Ժիդելին, Ալբեր Լապրադելին, Լուի Լեֆյուրին եւ Անդրե Մանդելշտամին:

Միջազգային-իրավական ապահովման կարելությունը կարելի է ցուցադրել Միջազգային դատարանում Բոսնիա-Հերցեգովինայի եւ Հարավսլավիայի միջեւ ծագած եւ Ցեղասպանության միջազգագրի կիրառմանն առնչվող կողմերի վեճի օրինակով: Դատարանում որպես Բոսնիա-Հերցեգովինայի խորհրդատուներ հանդես էին գալիս Իրավունքի դպրոցի պրոֆեսոր եւ միջազգային հետազոտությունների կենտրոնի տնօրեն Թոմաս Ֆրանկը, Միջազգային իրավունքի հանձնաժողովի անդամ եւ Փարիզի համալսարանի պրոֆեսոր Ալեն Պելեն, Փարիզի համալսարանի պրոֆեսոր Բրիժիտ Ստեռնը եւ այլ իրավաբաններ: Հարավսլավիայի կողմից հանդես էին գալիս ԱԳՆ գլխավոր իրավաբանական խորհրդատու, Նովի Սադի համալսարանի միջազգային իրավունքի պրոֆեսոր Ռ. Էտինսկին, Օքսֆորդի համալսարանի միջազգային իրավունքի պրոֆեսոր Յ. Բոռունլին, Լուվենի կաթոլիկ համալսարանի պրոֆեսոր եւ ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարի նախկին տեղակալ եւ գլխավոր իրավախորհրդատու Էրիկ Սոյը, Բելգրադի համալսարանի միջազգային իրավունքի պրոֆեսոր Ս. Ջորջեւիչը, իսրայելցի հայտնի իրավաբան, դեսպան Շաբթայ Ռոզենին, Պոդգորիցայի համալսարանի միջազգային իրավունքի պրոֆեսոր Լավրո Պերազիկը: Այժմ հարց տանք. միջազգային իրավունքի բնագավառի ուր հեղինակությունների խորհուրդներից է օգտվում Հայաստանի արտգործնախարարությունը Հայոց ցեղասպանության հարցում իր դիրքորոշումը սահմանելիս:

Պատասխանն ակնհայտ է, եթե նկատի ունենանք նրանց "1915 թ. Ցեղասպանության" ստերեոտիպը եւ այն թեզիսը, թե Հայաստանը կարող է հասնել Ցեղասպանության ճանաչմանը, բայց չի կարող առաջադրել սեփական իրավունքների հարցը:

Հայերի դառը փորձը, որոնց իրավունքները մշտապես զոհաբերվել են մեծ տերությունների քաղաքական շահերին, նրանց մեջ մշակել է

կայուն, գրեթե ճակատագրապաշտական պատկերացում քաղաքականության ամենագործողության վերաբերյալ:

Ժամանակակից հայ քաղաքական գործիչներից շատերը մտածում են գրեթե այնպես, ինչպես հայ միջնադարյան պատմաբանը, որն ասել է. "Իրավունքը մեռած է: Եթե կորած լիներ, մենք կգտնեինք այն":

Իրավիճակը բարդանում է նրանով, որ խորհրդային ժամանակներում, երբ միջազգային քաղաքականությունը, ինչպես նաև միջազգային իրավունքի կիրառումը համարվում էին կենտրոնի առանձնաշնորհը, իսկ Հայկական ԽՍՀ-ում միջազգայնագետ իրավաբանների պատրաստումը լիովին բարձիթողի էր արված: Հայաստանի կոմունիստական ղեկավարությունն, ի տարբերություն հարեւանների, իր քթից այն կողմ ոչինչ չէր տեսնում:

Հայազգի նշանավոր միջազգայնագետ իրավաբաններն ի հայտ եկան Ռուսաստանում եւ հաջողությամբ պաշտպանեցին նրա պետական շահերը: Մինչդեռ Հայաստանի արտաքին քաղաքականությունը մնում էր եւ դեռեւս մնալու է առանց պատշաճ միջազգային-իրավական ապահովման: Ֆինանսական կամ ինչ-ինչ այլ նկատառումներով Հայաստանի ղեկավարությունը տվյալ խնդրի առթիվ իր քաղաքական գիծը մշակելիս, որքան մեզ հայտնի է, չի ներգրավում համաշխարհային համբավի տեր փորձագետների:

Ղատական ընթացակարգին դիմելու հնարավորության մասին

Մենք գտնում ենք, որ Հայոց ցեղասպանության հետեւանքների հարցի լուծման համար Հայաստանը միջազգային իրավունքի օբյեկտիվ հիմքի վրա կարող էր Թուրքիային առաջարկել համատեղ Միջազգային դատարան դիմել՝ խորհրդատվական եզրակացություն ստանալու ցեղասպանությունը կանխելու եւ դրա համար պատժելու միջազգագրի 9-րդ հոդվածին համապատասխան, որով նախատեսվում է միջազգագրի մեկնաբանման, կիրառման կամ կատարման հարցերին առնչվող վեճերը դատարանին հանձնելու հնարավորություն ներառյալ Ցեղասպանության համար պետության պատասխանատվությանն առնչվող վեճերը:

Իսկ եթե Թուրքիան շարունակի Հայոց ցեղասպանության փաստը կտրականապես ժխտելու գիծը, ապա Հայաստանի Հանրապետությունը, նկատի ունենալով, որ Թուրքիան Ցեղասպանության միջազգագրի մասնակից է, կկարողանար գործ հարուցել միակողմանի կարգով:

Հովանավորների շրջանակի ընդլայնման մասին

Մենք գտնում ենք, որ օգտակար կլինեն, եթե շփումների հաստատման եւ փոխընդունելի լուծումների որոնման գործընթացը պաշտպանող հովանավորների շրջանակն ընդլայնվեր մասնավորապես Ռուսաստանի ներգրավման միջոցով, որն աչքի է ընկել Հայկական հարցի լուծման նկատմամբ իր ավանդական մարդասիրական մոտեցմամբ: Դա զերծ կպահեր հնարավոր քաղաքական շեղումներից:

Համաշխարհային հայկական կազմակերպության խնդիրները

Անցած տասնամյակներին մենք հասել ենք Ցեղասպանության ճանաչմանն աշխարհի մի շարք երկրների եւ հեղինակավոր միջազգային կազմակերպությունների կողմից: Այսպես, Եվրախորհրդարանը պահանջեց, որ Թուրքիան Հայոց ցեղասպանությունը ճանաչի որպես Եվրամիության անդամ դառնալու հնարավորության քննարկման նախապայմաններից մեկը: Միջուկաբաղադրության եւ նրա ներկայացուցչական կառույցների (նախ եւ առաջ ազգային ավանդական կուսակցությունների) նախաձեռնության շնորհիվ այսօր աշխարհի շատ երկրներում ունենք հեղինակավոր հայամետ լոբբի եւ հայերի ու Հայաստանի ճակատագրին առնչվող որոշումների ընդունման գործընթացի վրա դրականորեն ներգործելու որոշակի հնարավորություններ: Եվ վերջապես 20-21 դարերի սահմանագծին ցեղասպանության համաթուրքական քաղաքականության դեմ ուղղված հայկական ազգային շարժման գլխավոր արդյունքը դարձան Լեոնային Ղարաբաղի մի մասի ազատագրումը եւ այնտեղ հայկական պետականության վերականգնումն ի դեմս Լեոնային Ղարաբաղի Հանրապետության: Հայ ժողովուրդը ցուցադրեց իր վճռականությունն ազատության եւ ժողովրդավարության ճանապարհին, պատմական հայրենիքին սպառնացող վտանգի պահին համախմբվելու ունակությունը:

Դրա հետ մեկտեղ պայմանները պահանջում են, որ կատարելագործենք մեր մոտեցումը Ցեղասպանության հետեւանքների վերացման պայքարի նկատմամբ եւ լայնորեն օգտագործենք ժամանակակից միջազգային-իրավական, տեղեկատվական, քաղաքական եւ կազմակերպական հնարավորությունները: Այստեղ շատ բան կախված է հենց հայերի կազմակերպվածությունից, մեր պատրաստվածության մակարդակից եւ խնդրի յուրացումից, ազգի բախտորոշ խնդիրների շուրջը համախմբվելու մեր կարողությունից:

Հայոց ցեղասպանության հետեւանքների վերացման խնդիրն

առաջնահերթ կարեւորության համազգային խնդիրների մաս է կազմում, որը նշանակում է, որ հարկավոր է փնտրել եւ մշակել Հայաստանի եւ Մփյուռքի համատեղ գործունեության արդի պայմաններին համարժեք ծրագիր ու մեխանիզմ:

Առանձնահատուկ կարեւորություն ունեցող այդ համահայկական խնդիրը շատ դժվար, գուցե նույնիսկ անհնար կլինի լուծել մեր ներկայիս տարանջատվածության պայմաններում:

Որքան էլ բարդ լինեն արտաքին քաղաքական խնդիրները, հենց հայերի քաղաքական կյանքի դժվարությունների հաղթահարումն անհամեմատ բարդ կլինի: Պատմության դավերը մեզ վերածել են պառակտված ժողովրդի: Եթե պատմական Հայաստանի տարածքը բաժանված է մի քանի պետությունների սահմաններով, ապա հենց հայերին բաժանում են գրեթե 100 պետությունների սահմաններ: Էլ ավելի վատն այն է, որ մենք բաժանված ենք քաղաքական եւ այլ միջնորմներով, որոնք երբեմն ավելի դժվար է հաղթահարել, քան պետական սահմանը: Պետականությունը կորցնելու պահից ի վեր դարերի ընթացքում կեղեքիչները հաջողությամբ կիրառել են "բաժանիր, որ տիրես" սկզբունքը: Բանը հասել էր այնտեղ, որ նույնիսկ Ցեղասպանության զոհերի հիշատակի օրը նշում էին առանձին՝ ըստ կուսակցական պատկանելության:

Թվում է, այսօր սկսել է գերակշռել հանուն համահայկական խնդիրների, այդ թվում Ցեղասպանության խնդրի լուծման գործողությունները միավորելու անհրաժեշտության ըմբռնումը: Մեր դառը փորձը հուշում է, որ չի կարելի Ցեղասպանության, առավել եւս ամբողջությամբ Հայկական հարցը լուծել մեկ կուսակցության, մեկ համայնքի կամ միայն Հայաստանի Հանրապետության դիրքերից:

Խորանում է այն ըմբռնումը, որ միասնությունը, ջանքերի միավորումը, գործողությունների միասնական, ամբողջական ծրագրի մշակումը հաջողության պարտադիր պայմանն են: Պատմական այդ միտումի օրինաչափ դրսևորումը Համաշխարհային հայկական կազմակերպության ստեղծումն է: Այն հիմնվում է ամբողջ աշխարհում հայերի ազգային ինքնակազմակերպման եւ ինքնագիտակցության մակարդակը բարձրացնելու, աշխարհի հայության գիտական, տնտեսական, ֆինանսական ու քաղաքական ներուժն ամրապնդելու նպատակով՝ հանուն համահայկական խնդիրների հաջող լուծման, որոնցից է, անկասկած, Հայոց ցեղասպանության խնդիրը:

Ցեղասպանության բացասական հետեւանքները, հայ ժողովրդի ամբողջ կյանքի եւ հատկապես քաղաքական կյանքի վրա դրա ազդեցությունը նկատի ունենալով, դրա հետեւանքների վերացման եւ Թուրքիայի հետ հարաբերությունների կարգավորման խնդիրն

առանձնակի տեղ կգրադեցնի Համաշխարհային հայկական կազմակերպության գործունեության մեջ:

Մենք վստահ ենք, որ այդ կազմակերպության ստեղծումը թույլ կտա համակարգել եւ համաձայնեցնել հայկական քաղաքական ուժերի դիրքերը, մշակել ծագող հարցերի լուծման նկատմամբ ընդհանուր մոտեցումներ:

Համահայկական կառույցի ստեղծումը թույլ կտա հայերի դիրքորոշման միջազգային- իրավական ապահովման հարցում եղած ճեղքվածքը վերացնել ինչպես Սփյուռքի հայ մասնագետների ներգրավման, այնպես էլ օտարազգի միջազգայնագետ իրավաբանների ծառայությունների ֆինանսավորման միջոցով:

Ենթադրվում է Համաշխարհային հայկական կազմակերպության շրջանակներում ձեւավորել պրոֆեսիոնալ կառուցվածքային ստորաբաժանումներ, որոնք կմասնագիտանան հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման խնդրի քաղաքական, միջազգային-իրավական, պատմական եւ մյուս կողմերի մշակման գործում: Մասնավորապես խոսքը Հայկական հարցի եւ Ցեղասպանության խնդրի ուսումնասիրման Միջազգային կենտրոն կամ ինստիտուտ ստեղծելու մասին է:

Միավորելով մեր ուժերը, մենք կհասնենք հայ ժողովրդի արդար դատի լուծմանը եւ դրանով իսկ պայմաններ կստեղծենք մեր հարեւանի հետ կայուն խաղաղության, իսկական բարիդրացիության հաստատման համար:

Մոսկվա